

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրելի դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“

ՄԱՅԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(հացի կիրակի և տոն օրերին):

Հայտարարութիւնը ընդունվում է ամէն շաբաթ:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Տխուր համբաւ:—Ներքին տեսութիւնը:
Մի նկատողութիւն: Կովկասի և Անդրկովկասի հայ
կաթոլիկ հոգևորականները, Նումակ Շուշուցի, Նա-
մակ խմբագրիչը:—Արտաքին տեսութիւնը:
Նումակ Գերմանիայից:—Մշակութային հեռագիրներ:
Հայտարարութիւններ:—Բանասիրական: Գա-
րաբանութիւնը և նրա կապուածական խնդիրը:

ՏԵՍԻՍ ԶԱՄԲԱԻ

Թիւրքաց կառավարութեան ձեռ-
քով մահմետական ֆանատիկո-
սութեան գրգռելը բերեց իր ըս-
պասելի պտուղները: «Միջազգա-
յին հեռագրական ընկերութեան»
երեկվայ հեռագիրը բերեց մեզ մի
շատ տխուր համբաւ: Կ. Պոլսից
հաղորդում են որ Փոքր-Ասիա-
յում սկսվեցաւ բրիտանականների
կոտորածը...

Ահա, ուրեմն այն Թիւրքիան,
որից Լարսից րեֆորմներ է պա-
հանջում և որ անդադար պա-
տասխանում է թէ Թիւրքիա հա-
տակ բրիտանականների դանդառնե-
րը սուտ են, թէ բրիտանականները
Թիւրքիայում շատ լաւ են ապ-
րում, թէ Բ. Դուռը ինքն էլ

փափագում է իր հպատակ եր-
կիրներում անյապաղ բարենորո-
գութներ մտցնել և նրանց իրա-
զորման համար վաղուց է որ
պատրաստութիւններ է տեսնում...

Ուրեմն վաղը կամ միւս օրը
Թիւրքիան հաւասարութեան ըս-
կզբունքի վրա հիմնված րեֆորմ-
ներ պէտք է մտցնի իրան հպա-
տակ երկիրներում, իսկ այսօր
կոտորել է տալիս իր մահմետա-
կան հպատակների ձեռքով իր
բրիտանաց հպատակներին... Դո-
րանից արդէն մենք կարող ենք
եղբայրացնել թէ որքան անկեղծ
են Թիւրքիայի խօսքերը, որքան
արդիւնաւոր կը լինեն նրա խոս-
տացած րեֆորմները:

Բայց որքան էլ տխրաւի, ցա-
ւալի լինէր հեռագրական ընկե-
րութեան միջոցով մեզ հաղորդված
լուրը, այնու ամենայնիւ, պէտք է
խոստովանվել որ միայն այդ տե-
սակ ցաւաւի և խոշոր զէպքեր,
ինչպէս բրիտանականների կոտորա-
ծը, արաբների ապստամբութիւնը,
կամ Հայաստանի սովը կարող

են քաղաքակիրթ և մար-
դասէր Լարսից ուշադրու-
թիւնը դարձնել Օսմանեան պե-
տութեան իսկական դրութեան
վրա, այդ տեսակ զէպքերը միայն
Լարսից աչքերն են բաց ա-
նում...

Ուրեմն թող կոտորեն, թող
ճնշեն, թող արուեստական կեր-
պով իրանց երկիրների մէջ սով
զցնեն՝ Լարսից աղգութիւն
համարվող վայրերի մոնոփոնը,
թող ստիպեն իրանց անշուրջ
կառավարչութեամբ հպատակ ազ-
գերը ապստամբվելու, այդ միակ
միջոց է, որ Լարսից վերջապէս
ուշքի գայ և ուշադրութիւն դար-
ձնէ Թիւրքիա հպատակ ազգերի
անմխիթար դրութեան վրա:

Լա է բացարձակ վայրենի և
բարբարոս գործողութիւն, բան
թէ ծածուկ ճնշում՝ լուսաւորու-
թեան և մարդասիրութեան դի-
մակով:

Թա՛ղ Թիւրքիան ցոյց տայ ի-
րան ամբողջ աշխարհի առջև
այնպէս, ինչպէս կայ,— գուցէ այն

ժամանակ Լարսից այլ ևս չի
խաբլի Փարիզում ուսում առած
թիւրք դիպլոմատների կեղծ խոս-
տութներով և վերջապէս կը հա-
մոզվի որ Օսմանեան պետութիւնը
վաղուց է որ կորցրել է քաղաքա-
կան, պետական կեանքով ապրելու
իրաւունքը:

Մի պետութիւն, որ դիտմամբ
սով է զցում իր հպատակների
մէջ, որ սովը զցելուց յետոյ ար-
գելում է օգնութիւն հասցնել իր
սովատանջ հպատակներին, որ իր
հպատակների մի մասի ֆանատի-
կոսութիւնը պաշտօնապէս գրո-
գում է իր հպատակների միւս
մասի դէմ, որ կոտորել է տալիս
իր հպատակների մի մասը միւս
հպատակների ձեռքով... մի՞թէ
այդ տեսակ վայրենի պետութիւն
լուսաւորված, քաղաքակիրթ, մար-
դասէր Լարսից ընդունակ է
համարում մի անկախ, առանձին,
պետական հիմնարկութիւն, քա-
ղաքական մարմին կազմելու...

Երբ որ Լարսից այն ասում էք
թէ Թիւրքիա հպատակ փոքրիկ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՐԱԲԱՆՈՒԹԵՒՆ ԵՒ ՆՈՐԱ ԳԱՆՈՒԹԱԿԱՆ
ԻՆՊԻՐԵ

Շատ սրբող է, որ հոգաբարձութիւնը դիմում է
այդպիսի միջոցների ուսումնարանի համար եկա-
մուտ գտնելու գլխաւորապէս այն պատճառով, որ
այդպիսի միջոցների գործադրութիւնը չէ պահան-
ջում բնականօրէն ոչ ծանապարհօրէնութիւն և ոչ ևս
գլխաւորապէս ինչպէս այդ կարող էր պատահել, եթէ
նոքա իրենց բոլոր ուշադրութիւնը դարձնէին կա-
ռածների վրա: Այդ առաջին դեռ ներքին է,
բայց երբ ամբողջ հոգաբարձութիւնը իր նախա-
գահի, այն ևս Սեդրակեանի պէս դարձնում մար-
դու հետ միասին, դիմում են նոյն նպատա-
կով այնպիսի միջոցների, որոնք սաստիկ դա-
թակցանքում են ժողովուրդը, զորա զէմ չը բո-
ղբել և այդ արքայը չը դատապարտել, մենք,
զոհեմ մեր կողմից, աղետութիւն չենք համարում:
Գարաբանի հոգեւոր դպրոցի հոգաբարձութիւնը չէ
ամաչում հրապարակաբար ածրաւորութիւնը նշա-
նակելու թեմի մէջ գտնված օրբութիւնները կա-
պալով տալու համար: Թէ Գարաբանի ժողովուր-
դը մի առանձին բարեպաշտութեամբ և ջերմ-
ութեամբ համարում է իր բազմաթիւ սուրբե-
րը և ուխտատեղիները, ամեն տարի 3—4 անգամ
յոյսով և հաւատով դիմելով նոքա դուռը, դա
հանրաճանոթ իրողութիւն է: Երևակայեցէք, ու-
րեմն, թէ ինչ ահալին դպրութիւններ են տարած-
վում բարեպաշտ և տգէտ ժողովուրդի մէջ, երբ
նա տեսնում է, որ նոքա, որոնք իր կարծիքով,
պէտք է այդ բարեպաշտութեան պաշտպան հան-
դիսանան, այդպիսի անպատկառանքով են վերա-

բերվում զէպի սրբութիւնները: Թէ ինչ անբարոյա-
կանացուցիչ ազդեցութիւն է ունենում այդ տե-
սարանը ժողովուրդի վրա, և թէ ինչ վնասներ հե-
տանք կարող է արտադրել, դա ակնյայտ է, ու
որ փոքր ինչ ուսումնասիրել է պատմութիւնը:
Բաւական է, եթէ յիշենք այն հետեւեղը, որ ունե-
ցաւ ինչ ուշադրութիւնը և ինչ ակնաւորութիւնը:
Եթէ պատմական հոգեւորականութեան կողմից, եթէ
այդպիսի պատմական փաստ չը գիտեն հոգաբար-
ձութիւնը, եթէ նոքա, իրենց տեսակէտից նայելով,
այդպիսի միջոցները անաղին չեն համարում և
չեն հասկանում նոքա արդեաւոր հետեւեղը, դա
ներքին է, որովհետեւ ինչ կարելի է պահանջել
տգէտ և անհեռատես անձերից, ինչ կարելի է
պահանջել բարեպաշտից և թաւաճանքից, որոնք ին-
քանք հարստացած լինելով ամեն տեսակ ներքին
թէ անհեղինակ, կեղտոտ թէ մաքուր միջոցներով,
արբութիւնները ածրով ծախելուն մէջ նոյնպէս
հարստութեան մի միջոց են տեսնում: Բայց երբ
այդ բանը համարում և թողաւորում է մի հոգե-
ւորական, որը ոչ տգէտ է և ոչ անհեռատես, որը
լաւ ծանօթ է պատմութեան, ինչ չափից դուրս
անբարեխղճութիւն է: Գեւ մի էլ միմյանի վար-
դապետից այդպիսի բան կարող է ինք ապասել,
բայց անուանի օրբութիւնը հայ թաւաճանքից, ճշ-
մարիտ, անսպասելի էր, առաւել այն պատճառով,
որ Սեդրակեանի դուրսը բոլորովին անպատկառա-
պաշտութեանում է մի միջոցով կարգի այն յայտ-
նի արքային—մի պատմական արդարացում է մի-
ջոցը—որի դէմ, ինչն, իբրեւ հայկական եկեղեցու
վարդապետ, պէտք է ամեն ուժով մաքաւել:

Այս իրողութիւններից պարզ է, որ հոգա-
բարձութիւնը դիմում է այդպիսի միջոցների, և
կամ ինչ աղբիւրների չունենալու պատճա-
ռով, թէ ևս այդպիսի աղբիւրներ մեծ թուով կա-
րելի էր գտնել, եթէ հոգաբարձութիւնը բազ-
կացած չը լինէր հնացած, փտած բարեպա-
շտի և հաստատիւր ու հաստատելու թաւաճան-
քից ու կիրականներից, այլ իր մէջ ունենար աչ-

խոյժ, գործունայ, երիտասարդական ուժեղ տարր:
Եթէ չը լինէր Արիտասկէս Սեդրակեան վարդա-
պետը, եթէ նա ևս գործէր այնպէս, ինչպէս գոր-
ծել են իր նախորդները և չը յատկացնէր ուսում-
նարանին այն մի քանի ճոխ եկամուտները, որոնք
առաջ առաջնորդների և կոնսիստորիայի ու Սինդի-
կատների զբաղմունքն էին յատկացրած, ինչպէս
օրինակ քահանայական ձեռնադրութիւնից, մէտ-
րիքական տալուց, պատկազարմից, հոգեբաժնից,
քահանայների տուգանքի երկթաթիւղուց և ուրիշ
սոյնանման ազդեցիկներից զոյացած արդիւնքը, ան-
շուշտ, ուսումնարանը, նիւթականի կողմից, խիստ
աղիւղորմ վիճակի մէջ պիտի լինէր: Եւ օրովհետեւ
շատ քիչ յոյս կայ, որ ներկայ հոգաբարձութիւնը
աշխատէ ապահովացնել ուսումնարանի նիւթական
դրութիւնը, բարեկարգելով կառուածները և նրա
վրա մի առանձին ուշադրութիւն դարձնելով, ուս-
տի հետ փափաքելի է, որ մէկ. Հայրը բարեհա-
ճէր յետ դարձնել Սեդրակեան վարդապետին իր
թեմը, իբրեւ ամառայնամար և փորձառու անձը և
միակ առաջնորդ ու վարդապետը, որ կարող էր
օգնել ուսումնարանի բարգաւաճման ներկայ հան-
գամանքի մէջ:

Թէ ներկայ 3 հոգուց բաղկացած հոգաբարձու-
թիւնը բացի այն, որ նիւթականապէս ոչ մի օ-
գուտ չէ տուել, այլ և բարոյապէս վնաս է պատ-
ճառում զարդոյն, կարելի է իմանալ հետեւեղ օ-
րինակից: Եթէ օրիորդական դպրոցը Շուշու մէջ
աւելի կանոնաւոր է ընթանում քան տղայոցը,
զորա պատճառը գլխաւորապէս այն է, որ ու-
սուցչական խումբը մի առանձին ուշադրութիւն
է դարձնում նորա վրա: Գարաբանի մէջ ընտա-
նական կեանքը ամենաթշուառ դրութեան մէջ է.
այստեղ նոյն բանակալութիւնը, նոյն սարսափիկ
նախապաշարմունքները, որոնք շատ տեղերի հայե-
րին յատուկ են: Արական ապագայ սերունդը, իբ-
րեւ փոքրացյին ազատ կեանքին ենթակայ, զօրկ
է մնում ևս ինչ զատարարութիւններից և ինչ
որ մի կողմից ուսումնարանը չինում է, միւս կող-

մից այդ չինածը փողոցը քանդում է. այդ է
պատճառը, որ բացի բարձր ուսումնարաններում
իրենց ուսումը շարունակող սակաւթիւ երիտա-
սարդութիւնից, տեղական բազմաթիւ երիտասար-
դական տարրը բարոյապէս բոլորովին փչացած է.
Նորա միակ իդէալն է գնալ Մարսել իւրեւ վաճա-
ռական, մի քանի տարի դուրսնալ այնտեղ և
վերադառնալով Շուշու ամուսնանալ մի դեղեցիկ
օրիորդի վրա: Հասկանալի է, թէ որպիսի բարոյա-
կան պաշարներով է վերադառնում իր հայրենիքը
այդպիսի երիտասարդը, որը անցնելով ֆրանսիա-
կան հեշտասիրութեան ամեն տեսակ քուրանքից,
ի վերջոյ վարակված այդպիսի հեշտասիրութեան
բոլոր հետեւեղներով—գնալուց և վերադառնալու հի-
ւանդութիւններով, հարկաւոր է համարում այնու-
հետեւ ընտանիքի տէր դառնալ, և անմիջ, խեղճ
էակներ, զուարթ ու առողջ աղջիկները ստիպ-
ված են այդ բարոյական հրէշների ընկեր դառնալ:
Ահա այդ փչացած ընտանեկան կեանքի մէջ թաղմ
առողջ կեանք, բարոյական բողբոջ հաստա-
տելու համար պէտք է իզական սերունդի դաստի-
արակութեան վրա առանձին խնամք տանել, ըստ
որում օրիորդների դպրոցի մէջ ստացած բարոյա-
կան կեանքի սերմերը այնպէս դիւրաւ չեն կա-
րող փչանալ, երբ նոքա աւելի սահմանափակված
կեանքի ազդեցութիւնից: Միւս կողմից յայտնի է
թէ ոչ մի երիտասարդութիւն այնքան անտարբեր
չէ զէպի ազդեցութեան գաղափարը, որքան Շու-
շու երիտասարդութիւնը: Ի հարկէ, օրիորդները
ստանալով բուն ազգային դաստիարակութիւն և
կրթութիւն, կարող էին ապագայում իրենց մտած
ընտանիքի կազմակերպութիւնը զէպի լաւ փո-
խել և իբրեւ մայրեր, մի աւելի լաւ և բարոյական
սերունդ պատրաստել: Ահա զէպի այդ ցանկալի
նպատակին էր ձգտում ուսուցչական խմբի գոհ
հասկացող մասը, բայց ինչ արած որ խմբի երե-
քամայ աշխատութիւնը կարող է փչանալ մի
տգէտ և կեղտոտ հոգաբարձութիւն հրամանով: Հո-

L. U.

Ազգի ձգնաժամի ժամանակ, եթէ կաթո-
լիկ հոգևորականութիւնը չը գործէ, չը խօսի,
չաշխատի,—այդ մեռելային լուծութիւնը կա-
րող է շատ վատ հետևանքներ ունենայ: Եթէ
Անդրկովկասի հայ—կաթոլիկ հոգևորակա-
նութիւնը չը կատարէ իւր պարտքը, նա չէ
կարող զանազանիլ այն վատ առաջնորդները,
որոնք արդէն դասված են ազգութեան դա-
ւաճաններ կարգին, թող աշխատի կաթոլիկ
հոգևորականութիւնը, երբ ժամանակը պահան-
ջում է ոչ թէ խօսք, այլ գործ, իսկ բարի
գործը, բարի օրինակը, եռանդոտ աշխատանքը
կարող է հազարաւոր օրեր կապող և
հազարաւոր մարդի ազատել սովածութիւնէն:

Հայ-կաթոլիկ

ՆԱԽԱԿ ԵՈՒՆՈՒՅ

19 յունիսի

Ահա ամբողջ տարին լրանում է՝ որ Երուսաղեմի
հոգևորականութիւնը, կարծես աւելորդ չէր լինի նոցա
մասին մի քանի տեղեկութիւններ հաղորդել:

Հոգևոր երկսեռ հոգևորականութիւնը ըս-
կուեցան անցել մայիսի 19-ին և բաւական
յաջող վերջացան ամսին 15-ին: Չը ցանկանալով
երկար ու բարակ խօսել այս ուսումնարանների
վարչութեան բարոյական և նիւթական գործունեու-
թեան վրա՝ այստեղ կը բերեմ մի թիւթի հաշիւ, որ
ից ընթերցողը ինքը պարզ կը նկատէ նրա մեծ
յառաջդիմութիւնը: Երուսաղեմի հոգևոր հոգևոր
սկըսած իր հիմնադրութեան օրից մինչև 1878 թիւ
այնքան աշակերտներ չէ ունեցել, որքան այս եր-
կու վերջի տարին ունէր: աշակերտների թիւը եր-
բէք 200-ից չէ բարձրացել, բայց այժմ նա ունի
500-ից աւելի: Երուսաղեմի հոգևոր հոգևոր
երբէք չէ ունեցել չորրորդ դաստառուն, որ համապատաս-
նէր իր կուրսին, իսկ միայն նրա լոկ անունն է և-
ղել, կամ հենց շատ անգամ չէ չէ եղել, բայց
այժմ նա ունի չորրորդ դաստառուն համապատաս-
խանող պրոգրամայի ու այս տարի էլ կուենայ
հիմնադրողը: Երուսաղեմի հոգևոր չէ ունեցել,
բայց պ. Դանիէանի ժամանակից, այսպիսի կադ-
մակերպված ուսուցչական խումբ, որ այժմ ու-
նի: (Ուսուցիչները քաղաքի բոլոր դասակարգի
մէջ մեծ յարգանք և պատիւ են վայելում, որ
անսպասելի էր չորսըցի կողմից): Մեր հոգևոր
հոգևոր ոչ մի ժամանակ չէ ունեցել այնպիսի մի
հոգևորականութիւն, որը այժմ ունի. ճշմարիտ է
երբեմն պատահում էին նոցա մէջ անհամաձայնու-
թիւններ, բայց դրանք շուտով անհետանում էին:
Հոգևորականութեան ներքին գործունեութեան վրա
մանրամասն խօսել թողնում եմ ուրիշ անգամ: Բա-
ական է այժմ միայն այսպիսի սակ՝ որ հոգևոր-
ականութիւնը 3—4 հազարից ուսումնարանների ար-
դիւնք հասցրել է 17,000-ի: Այսպիսի մի ֆինան-
սական անսպասելի յառաջդիմութեան համար
պարտական ենք շնորհակալ լինել հոգևորական-
ութեան մեծ. պ. Բաբա Բեգլարեանից, որը
ալ ու ձախ իր վրա խօսողներին ուսուցողութիւն
չը դարձնելով, հրապարակաւ ցոյց տուաւ իր ան-
ձնագործութիւնը: Գեաւ պէտք է ստանձնէ որ ուսում-
նարանների հաշիւին կառավարները, որի տարա-
ծութիւնը հասնում է 200,000 դրամային, և որի
մասին հաւատարմացում եմ, որ ոչ լրագրողութիւնը և
ոչ էլ ազգութիւնը տեղեկութիւն ունի մինչև հի-
մայ դեռ բացի վնասից մի արդիւնք չէ ստացվել:
Այս ազգային մեծ ժառանգութեան վրա, որի նը-
մանը ոչ Ս. Ելմիսինը, ոչ Ներսիսեանը հոգևոր և
ոչ նոյն իսկ Մուրադեան վարժարանը ունի, գուցէ
կը խօսենք մի աւելի յարմար ժամանակ և աւելի
մանրամասն:

Բայց պէտք է ասած՝ որ քննութիւններին այս
տարի հասարակութիւնը այնքան չէր յաճախում,
ինչպէս անցել տարի: Իսկ վերջի քննութեանը,
երբ ձևադրութիւնը, նկարչութիւնը և երգչու-
ղութիւնը էր, այդ օրը հանդիսականներով լիքն էր
օրինորդական ուսումնարանի բոլոր սենյակները:
Այս օրը, կարծես, քաղաքի համար մի մեծ տոն լի-
նէր, ոչ միայն հայեր ալ և օտարներ էլ մասնա-
կից էին այս հանդէսին: Նկարչութիւնները և ձև-
ադրութիւնը բաւական գեղեցիկ էին, ժողովուրդը
համարեա հիացաւ այս առարկաներով: Ձևադր-
մանը մէջ այնպիսի առարկաներ կային, որոնց
համար մեծ ծախք, ժամանակ և աշխատութիւն էր
վաճակված, բայց նրանք իսկապէս չաւայութեան

առարկաներ էին և ոչ կեանքի պիտոյքներ: Մեր
ժողովուրդը առանց նրանց ևս բաւական վա-
րձված է չաւայութիւնների մէջ, բայց դպրոցը
պէտք է աշխատէ ոչնչացնել այդ ախտը և ոչ
թէ դարգացնել նրան: Երուսաղեմի հոգևոր
հոգևորականութիւնը, ուսուցիչներին, աշակերտներին
և աշակերտութիւններին, որոնց ամեն մէկը պարտք
ճշտութեամբ կատարած տեսանք: Այս, համարձակ-
վում եմ ասելու, որ մեր երկու հոգևոր հոգևոր
այժմ աւելի բարձր է կանգնած, քան մեր միւս
դասակարգի դպրոցները: Թէև այս տարի չոր-
րորդ դաստառն աշակերտների մի քանիսը պէտք
է թիւնի գիւղական դպրոցներին ուսուցչութեան
պաշտօն ստանային, բայց յետագայից աւելի
աւելաւ տարին այս աշակերտները և չորրորդ դա-
ստառն աշակերտութիւնները պ. Մանդիլեանից մաս-
կավարժական դասեր կը լսեն և նրա ներկա-
յութեամբ մեր դպրոցներում փորձական դա-
սեր կը կարգան ու առաջիկայ տարուանից կը
ընդունեն գիւղական վարժարանի պաշտօն: Այս-
պէս այս տարի կուենանք տղայոց հինգերորդ
դաստառն, իսկ օրինորդաց չորրորդ, բայց առա-
ջիկայ տարվայ համար շատից քիչից փորձված
և օրինաւոր գիւղական վարժարաններ: Գոյս ու-
նենք որ պ. Մանդիլեանը չը պէտք է լինայի իր
ճիգը թափելու ամենայն անձնութիւնները կա-
տարել իր վրա ընդունած պարտականութիւնը:

Իսկ քաղաքային օրինորդաց դպրոցի մասին այս
անգամ երկու չը պէտք է խօսեմ. այսօր միայն
կասեմ, որ աւելի վաղվա և անհաւանանքի դը-
րութեան մէջ է, քան անցել տարի: Օրինորդաց
այս ուսումնարանը յետ է գնում և, կարծես, քա-
ղաքային վրա լինի: Օրինորդացի թիւը նոյնպէս
նուազած է: Յանկալի էր այս դպրոցը նոյնպէս
ծաղկաւ գրութեան մէջ տեսնել:

Արցախցի

ՆԱԽԱԿ ԽՐԱԿԱՐԻՆ

Թիֆլիս, 6 յունիսի

«Մեղրու» լրագիրը շատ սխալվում է կարծելով
թէ ես «Մեղրու» 98-դ համարում գրելով, իրան եմ
ուղեցել պատասխանել. ես խոստովանում եմ որ
«Մեղրու» գէշերիցը ես չունեմ, ես չեմ կարող
այն ունեն գործածել, որ նա է գործածում: Միայն
նորա զգալարութեանց դէմ է շատ, թէ քիչ փող
կեանքիս մէջ մէկ մարդու թէ շատ, թէ քիչ փող
երբէք տուած չեմ, որ աւետարանական դասնայ,
թէ և շատերը այդ բանը կարծելով ինձ մօտ եկել
են ու դատարկ գնացել և մինչև մասն էլ ոչ ոք
այդ նպատակով փող չեմ տալ, համարված լինելով,
որ յաւիտեան չէ կարելի փողով կրօն կամ հա-
մարում փոխել տալ: Ոչ ոք չէ կարող ինձ վրա
մի այդպիսի բան ապացուցանել թէ ես երբէք
արած լինեմ: Բայց թէ ոգրմութիւն տալիս ենք
մենք աւետարանականներս իւր և զուտ ոգրու-
մութիւն մեզ դիմող ազգայիններին առանց կը-
րօնքի և ազգութեան տարբերութեան—ի հարկէ
մեր կարողութեան շափով մեր անձնական աշ-
խատանքից—դա մի ընդհանուր մարդկային պար-
տականութիւն է, որի համար ոչ ոք ոչ զքի չի
մեղադրի:

Ջրպարտութիւն է այն խօսքն էլ որ իբրեւ թէ
եւ, Ամիրխանեանց ահա եկեղեցին կապալտա-
կան եմ կոչել կամ կոչում լինիմ: Դա ոչ ոք չէ
կարող փաստով ապացուցանել, որովհետեւ այդ-
պիսի միտք չը կա ինձանում: Եթէ այդպէս լինէր,
մենք աւետարանականներս լուսաւորչական եկե-
ղեցին թողնելու կը մկրտէինք, որովհետեւ մենք
մկրտութիւնը անհրաժեշտ մասն ենք համարում
քրիստոնէութեան, բայց ուրիշ եկեղեցիների պէս
լուսաւորչական հային, ուսուցչուն կամ յոյն
(լուսաւորչական յոյն էլ կան, որոնք դասնու-
թիւնով լուսաւորչական են, բայց ազգաւ Գոյն)
մենք մեր եկեղեցին ընդունելու կրկին անգամ
չենք մկրտում: Նորա մկրտութիւնը բոլորովին
վաւերական և քրիստոնէական ենք համարում:
Նոյն իսկ Գեղեցի հայ Հաջի Մեղրուից որ Տաճկա-
ստանում մասնաւորապէս կրօնք էր ընդունել, թիֆլիս-
տեւ, թիֆլիս կնոջ հետ ամուսնացել, և երկու
զաւակներ էլ ստացել՝ Մուսթաֆա և Փէմպէ,
երբոր Կ. Պոլսում իմ աշխատանքով դար-
ձեալ վերադարձաւ քրիստոնէութեան մէջ իր 'ի
ծնէ թիֆլիս կնոջն ու զաւակներով, մենք Հաջի
Մեղրուին կրկին անգամ չը մկրտեցինք, այլ նրանից
հրապարակաւ զղջում պահանջեցինք միայն իսկ
կնոջն ու զաւակներին մկրտեցինք: Ուրեմն անհիմն
զրպարտութիւն է ասել թէ Ամիրխանեանց կամ
աւետարանական հայերը յանուն ամենաուրբ
նրբորդութեան մկրտածներին կրկին մկրտում
են: Հիմարիտ է՝ Թիֆլիսում կան ուսուցչու, որոնք
ազգաւ և լեզուով ուսու են, և բարեխառ եկե-

ղեցի են կաղմել, և մեր տէրութեան օրէնքներն
էլ նորանց ճանաչել են իբրեւ քրիստոնէական եկե-
ղեցի. ահա նրանք մկրտում են, և այն էլ ոչ թէ
դիւրեւով կամ մի ծածուկ անկեւում, այլ լոյս
օրը բոլոր աշխարհի աչքի առաջին կուր դե-
տումը: Նրանք ուրիշ ոչ մի եկեղեցու մկրտու-
թիւնը չեն ընդունում, և ճշմարիտ քրիստոնէա-
յութեամբ են միայն—ինչպէս ես կարծում եմ—
իրանց մկրտածներին: Եւ նրանք մկրտում են միայն
չափաւորներին: Մենք հայ աւետարանականներս
այդ բապտիստ (որ նշանակում է մկրտածներ)
ուսուցչին հետ մէկ չենք: Ես ինքս վեց զաւակ
ունեմ, և զորանք ամենքը մկրտված են երե-
խայութեան մէջ:

Մեծապատիւ խմբագրապետ, իմ և կովկասում
կողմ հայ աւետարանականների անկեղծ շնորհա-
կալութիւնը արանով «Մեղրու» յայտնելով, հրա-
պարակ եմ հանում միանգամայն նաև իմ ուրա-
խութիւնը, որ լուսաւորութեան ազատամիտ ազ-
նիւ աստիճանների վրա կանգնած հայ ազգի
անուան պատիւը պաշտպանելով ազգին մէջ գը-
տնուող փոքրամասնութեան ձայնն ու գաղափար-
ները արտասանելու համար մինչև ցարդ բաց
պահեցիք ձեր պատուական լրագրի էջերը իբրեւ
անաչառ դատաւոր, որ նոյն իսկ ամենաչար յան-
ցաւորին իրաւունք է տալիս ինքն իրան պաշտ-
պանելու: Սրանով ես դադարում եմ «Մեղրու»
լրագրի հետ որ և է բանակցութիւն ունենալուց,
բայց չեմ դադարի թէ աւետարանական հայերի,
թէ կրօնական և թէ այլ և այլ օգտակար խնդի-
րների մասին գրելուց:

Ա. Ամիրխանեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 10 յունիսի. 80

Կոնֆերէնցիայի վիճուք վերջապէս յայտնի եղաւ.
վեց մեծ եւրոպական պետութիւնները ընդունեցին
իր ուսման Գերմանական և թիւրքական մէջ այն
գիծը, որ արդէն վարդիպ. պ. Վադլինգստեյն, նախ-
կին նախարար-Նախագահ Ֆրանսիական հանրապե-
տութեան առաջարկել էր: Քանի որ կոնֆերէն-
ցիայի նստերը շարունակվում էին, կատարեալ
դադանք վճռված էր պահել վիճարանութիւնների
մասին և այս պատճառով ամեն տեսակ լուրեր
հասնում էին լրագիրներին և տարածվում դոցա
չնորսով: Բայց ինչ ասել կուզէ որ այդ լուրերը
կամ սխալ էին, կամ աննշան, կամ հաւանականու-
թեան վրա հիմնված: Հէնց որ նիստերը սկսվեցան
իսկոյն լրագիրներից տեղեկացանք իւր թէ թիւր-
քական պատրաստ է ենթարկվել եւրոպական պե-
տութիւնների վճռին որպիսի և լինի դա: Բայց
արդէն սկզբից ձայնի լսելի եղան՝ ձիւթ եթէ
թիւրքական ընդդիմանայ, չուզէր նա ձանաղել Նեո-
պոլիսի վճիռը և պահանջը, ինչ պիտի անեն պե-
տութիւնները, որ իրանց կամը իրազեմովի և նը-
րանց վճիռները չը մնան միայն թղթի վրա, այլ
ճշմարիտ իրականութիւն դառնան, ինչ ուժով կա-
րող է Նեոպոլիս ստիպել թիւրքական յարգել իր
ցանկութիւնները և վճիռը. ինչ միջոցներ կարելի
է գործ դնել, եթէ թիւրքական կը հրաժարվի կա-
մաւոր կեպով Եւրոպայի իրաւունքին...
Այսպիսի կասկածներ եթէ արդէն այն ժամանակ
լսվում էին, երբ գեաւ անորոշ էր թէ ինչ պիտի
վճարի կոնֆերէնցիան, հասկանալի է որ դրանք
այժմ աւելի մեծ ուժով, աւելի անհամբեր սաստ-
կութեամբ առաջարկվում են կրկին և կրկին ա-
մեն մասնող մարդու կողմից... Եւ ինչ պէտք է,
ինչ կարելի է պատասխանել այս հարցերին...
«Տեսնենք», դա միակ խօսք է, որ ուղղակի պա-
տասխան կարող է համարվել:

Կոնֆերէնցիայի նիստերը վերջացան, ինչպէս
այժմ լսում ենք, իբրեւ արդիւնք դուրս բերելով
կատարեալ համաձայնութիւն բոլոր մասնակից պե-
տութիւնների մէջ: Բոլոր վեց պետութիւնները
ինչպէս մի մարդ, մի ոգի, մի ձայն, մի կամք
դեռ այն կարեւորութեան մասին թէ ինչպէս իրա-
զեմովի այս վճիռը, եթէ Բ. Դուրը նրան ընդդի-
մանայ—ո՞վ դիմէ: Լրագիրները տարածում են
անդադար լուրեր. մի օր լսվում է, որ Անգլիան և
Ֆրանսիան իրանց հաւատարմը, իրանց զորքը պի-
տի առաջարկեն որ պատշաճ ժամանակին ստիպեն
թիւրքական յարգել Եւրոպայի ցանկութիւնները:
Միւս օրը դուրս է գալիս Republique française և
յայտնում է որ դա խնդրութիւն կը լինէր եթէ
Ֆրանսիան իր վրա առնէր այս տեսակ խնդրանք
պաշտօնը, որ դա մի բախտաւոր դրա՞յքապա-
նութիւն կը լինէր դուրս գալ իբրեւ լիազոր իրա-

զործիչ, գործակալաւոր ամբողջ Եւրոպայի: Մի ու-
րիշ օր հաստատաւ արգելադրեց իմանում է մի
լրագիր, որ Ռուսաստանը առաջարկել է 20,000
զինուոր ուղարկել Գերմանական օգնութեանը, ե-
թէ նա ստիպված լինէր զէնքի ուժով առնել այն
հաւանքները, որը Եւրոպայի ընդհանուր և միանշան-
վածով նորան պիտի պատկանեն այսուհետեւ: Եւ
չը նայելով որ Ս. Պետերբուրգից այդ լուրը պաշ-
տօնապէս և հերքվում է, լրագիրները այնու ամե-
նային շարունակում են խօսել այս կարեւորութեան
և դորա հետևանքների վրա, նրանք իմանում են
մինչև անգամ, անկասկած նոյնպէս հաստատաւ ար-
գելադրեց որ այդ առաջարկութիւնը Ռուսաստա-
նը արել է Լոնդոնի իր դեսպանի միջոցով, որ պ.
Լոնդոնից դորա մասին խօսակցել է լորդ Գրէն-
վիլի հետ, որ սա ոչինչ չը պատասխանեց այդ
անսպասելի առաջարկութեանը, իսկ ինքն յե-
տոյ իսկոյն տեղեկութիւն տուեց դորա մասին
Անգլիայի բոլոր դեսպաններին օտար պետութիւն-
ների մօտ:

«Polit. Corr.» իմանում է, որ իշխան Հոնդեյն
երբ տեղեկացաւ Ռուսիայի այս առաջարկութեան,
իսկոյն իմաց տուեց Բերլինի թիւրքաց դեսպանին
ասելով, որ Ռուսաստանը պատրաստ է զէնքերի
զորութեամբ իրազեմով Անգլիայի պահանջները:

Այդ խառն ու շփոթ տեղեկութիւններից կա-
րելի է արդեօք բան հասկանալ... Նման չեն այդ
բոլոր լուրերը իւր թէ նրանք կատարեալ մոլոր
մէջ են պատրաստվում, որ դրանք լրագրական
թղթերն են:

Մի այլ կողմից պատմում են, որ Գերմանական
արքան պարզ յայտնել է, որ նրա երկրը հնար
չունի իր սեփական ոյժերով ստիպել թիւրքական
իրազեմով Եւրոպայի կամը, որ եթէ Ռուսաստա-
նը, Ռուսիան, Սերբիան և Չեքոսլովակիան միա-
միտ գործելով հաջիւ կարողացան յաղթող հանդի-
սանալ թիւրքական վերա, որքան ուրեմն փոքր է
հաւանականութիւնը, որ Գերմանական մեծակ կա-
րողանայ ցանկացածին հասնել: Գէորդ արքան
աւելացրել է, ասում են, որ եթէ թիւրքական զի-
ւոյններ անի, այն ժամանակ նա յանձն կառնի պա-
րանադիմելի դէմ պատերազմելու և Գերմանական
պահանջները յարգել տալու:

Քաղաքակրթ Եւրոպան, որ իրան լուսաւորու-
թեան և քաղաքակրթութեան առաքեալ է համա-
րում, որ անսահման դուրսանել է զուտ որ և է
վայրենի տոհմեր և ազգեր մարդկային դարձնելու
համար, որ միսիոնարներ է ուղարկում Աֆրիկայի
անմատչելի կենտրոնը, նոյն քաղաքակրթ Եւրո-
պան անզոր է հանդիսանում երբ հարց է լինում
հին քաղաքակրթութեան պատկանող դժբաղդ և
բազմաթանգ ազգեր կամայականութեան և կոպիտ
ոյժի դէմ պաշտպանելու... Անդոր չէ, այլ վախկոտ
է. այնտեղ, վայրենիներին օգնելով, նրանց մտաւոր
և հասարակական մակերեսը բարձրացնելով, նա
չէ վնասում, ընդհակառակը ինքն էլ օգտվում է.
Իսկ այստեղ պաշտպանելով հարստահարված ազ-
գեր նա վախենում է որ իր պետութիւններից մի-
նը աւելի մեծ օգուտներ ստանայ, քան թէ միւսը,
վախենում է որ այսպէս անուանալ Եւրոպական
հաւասարակշռութիւնը, Եւրոպական կոնցերթը
վնասվի, որ ներդաշնակութիւնը դէպի աննորդա-
նակութիւն փոխվի: Ամեն մէկը պետութիւններից
վախենում է ուրիշի օգուտից եւրոպական կամ
մօտակայ երկրներում, որովհետեւ միմի օգուտը
միւսին լինում է նշանակում և այդ դարմանալի
հասկացողութեան վնասի և օգուտի մասին զոհ է
գնում քաղաքակրթութեան ընդունակ մի ազգ
միւսից յետոյ, կլանվում է, ջնջվում է, որովհետեւ
աւելի օգտակար է Եւրոպայի հաւասարակշռու-
թեան համար պահպանել և պաշտպանել մի փը-
տած, անընդունակ, կոպիտ, մոխրանոց, անբարո-
յական պետութիւն... Իսկ եթէ երբեմն պատա-
հում է որ Եւրոպան իր մարդասէր զգացմունքներ
է ցոյց տալիս և ըստ երեւոյթին ճշկամ ճշողի
դէմ, հարստահարվածին հարստահարողի դէմ է
պաշտպանում, այդ պաշտպանութիւնը կամ իր սե-
փական անմիջական օգուտներից է բղղում, կամ
մնում է մի դատարկ ցոյց, որի վիճակն է փառա-
նակաւոր խօսակցութեան առարկայ լինել և յե-
տոյ թղթի ձևով մնալ դեսպանատներին, միմիա-
տրութիւնների արկիւնների մէջ:

Ինչ կը լինի ուրեմն Բերլինի կոնֆերէնցիայի
հետևանքը այն ազգերի համար, որոնք երկու տարի
ապարդիւն կերպով սպասեցին Բերլինի առաջա-
ժողովի վճիռների իրազեմունք... Ի՞նչ մնան և դե-
ռա վճիռները, կը մնան և քիչով Եւրոպայի պա-
հանջները առանց հետևանքի, թող կը տայ Եւրո-
պան, որ թիւրքական ընդդիմանայ և կը սպասի ար-
դեօք այս պետութեան ընկան մահուան, որ հե-
տևանք պիտի լինի իր այժման խառն դրութեան:

—Տեսնենք...

Անդրեաս Արծրունի

Типографія А. А. Михельсона